Իւրաքանչիւր հիւանդանոց ունի իւր առողջապահական կենտրոնը մի բժշկի օգնականով, որ գտնվում է աւելի բազմամարդ գիւղերում, այսպէս Քիւրդամիրի հիւանդանոց կենտրոնը գտնվում է Ալվանդ գիւղում, Արիշիբինը՝ Աստարա գիւղում, Գեօկչայինը Իվանովկայում և Սալիանինը՝ Ջաւադում։

Բոլոր հիւանդների թիւը յիշեալ հիմնարկութիւններում եղել է՝

| | Հիւանդների թիւը | Մեռնողների | 1892 Թ. հիւանդ. մնացած |
|---|---|---|---|
| Բագուայ քղքկն հիւանդանոցում | 2,505 | 171 | 112 |
| Երկաթուղու հիւանդանոցում | 1,294 | 40 | 35 |
| Րէալական ուսումնրնի. հիւնդնցմ- | 45 | — | — |
| Ս. Նունէի հիմնրկ. հիւանդանոցում | 36 | — | — |
| Քիւրդամիրի հիւանդանոցում | 10 | — | — |
| Գեօկչայի հիւանդանոցում | 11 | — | — |
| Արիշիբի հիւանդանոցում | 13 | — | — |
| Սալիանի հիւանդանոցում | 12 | — | — |
| Բալախանի հիւանդանոցում | 158 | — | — |
| բոլորը | 4,662 | 252 | 180 |

Երթեւեկ հիւանդներ օգտուել են՝

| | Այցելողների Թիւը |
|---|---|
| Բագուայ քաղաքական հիւանդանոցում . . . . | 3,272 |
| » մասնաւոր բուժարանում . . . . . | 3,345 |
| Երկաթուղային » . . . . . | 5,899 |
| Բալախանու » . . . . . | 9,205 |
| Ճիբաեւի գործարանի հիւանդանոցում . . . . | 3,097 |
| Սալիանի » . . . . | 4,293 |
| Արիշիբի » . . . . | 6,547 |
| Գեօկչայի » . . . . . | 5,869 |
| Քիւրդամիրի » . . . . . | 2,054 |
| բոլորը | 43,581 |

Ծաղկահատութիւնը առաջ է գնացել աւելի յաջողութեամբ նահանգի այն չորս գաւառներում, ուր եղել են տեղական հիւան-